Արձանագրություն N 5

«ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքի Քաղաքային զբոսայգու բարեկարգման, հեծանվուղու և սանհանգույցների կառուցման» աշխատանքների թիվ ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«10» «հոկտեմբերի» 2019թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ) — Սարգիս Հովհաննիսյան

անդամներ՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Էդուարդ Ջանջուղազյան

Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Արթուր Սողոմոնյան

Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Արեգ Եղիյան

քարտուղար՝

Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ) — Անի Բազեյան

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի **չորս** անդամները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման վերագնահատման նիստը տեղի է ունեցել 2019 թվականի **հոկտեմբերի 10-ին**, ժամը՝ 10:00-ին, ՀՏՋՀ գրասենյակի շենքում, հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Ուլնեցի 31., 4-րդ հարկ հասցեում:

Նիստը նախագահում էր Սարգիս Հովհաննիսյանը, իսկ քարտուղարն էր՝ Անի Բազեյանը:

ՕՐԱԿԱՐԳ

Որոշվեց՝

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտի/երի/՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների վերահաստատման մասին
2. ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից վերահայտարարելու մասին

3. ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը վերահաստատելու մասին

Կողմ՝ 4, դեմ՝ 0

1. ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտի/երի/՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների վերահաստատման մասին

Հանձնաժողովն արձանագրեց, որ

- ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման արդյունքում 1-ին տեղ զբաղեցրած ՋԵՐՄՈՒԿՇԻՆ ՓԲԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի գնահատման փուլում ՋԵՐՄՈՒԿՇԻՆ ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել, քանի որ ՋԵՐՄՈՒԿՇԻՆ ՓԲԸ-ի կողմից ներկայացված 2016-2018 թվականների համախառն եկամուտը պակաս է եղել ՋԵՐՄՈՒԿՇԻՆ ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկից:
- ՋԵՐՄՈՒԿՇԻՆ ՓԲԸ-ն սույն թվականի սեպտեմբերի 6-ին՝ անգործության ժամկետի ընթացքում, ներկայացրել է բողոք՝ պահանջելով չեղարկել գնահատող հանձնաժողովի որոշումը՝ ՋԵՐՄՈՒԿՇԻՆ ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու վերաբերյալ:
- Համաձայն ՋԵՐՄՈՒԿՇԻՆ ՓԲԸ-ի կողմից շտկված հաշվետվությունների, և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից բողոքը քննող անձին տրամադրված հոկտեմբերի 1-ի գրության, ՋԵՐՄՈՒԿՇԻՆ ՓԲԸ-ի 2016-2018 թվականների համախառն եկամուտը սույն թվականի սեպտեմբերի 26-ի դրությամբ կազմել է 222,205,690 ՀՀ դրամ, որը պակաս չէ ՋԵՐՄՈՒԿՇԻՆ ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկից՝ 215,400,000 ՀՀ դրամից:
- Բողոքը քննող անձը որոշել է պարտավորեցնել «ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել սույն թվականի օգոստոսի 28-ի թիվ 4 արձանագրությամբ կայացված ՋԵՐՄՈՒԿՇԻՆ ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի մասով բողոքը քննող անձի կայացրած որոշումը՝

Որոշվեց՝

1. Վերահաստատել ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի բոլոր մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտի/երի/՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.

Հ/հ	Մասնակիցի անվանումը	Գնահատականը
1	Ջերմուկշին ՓԲԸ	Բավարար
2	ՎԱՆԻ ՍՊԸ	Բավարար
3	Հարսնաձոր ՍՊԸ	Բավարար
4	ՄԱՎՇԻՆ ՍՊԸ	Բավարար
5	«Մ-Գրուպ Էներգոսերվիս» ՍՊԸ և «Գոհարիկ» ՍՊԸ կոնսորցիում	Բավարար

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 48-րդ կետի, և համաձայն ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի մասով բողոքը քննող անձի կայացրած որոշման՝

Որոշվեց՝

1. ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել՝ ՋԵՐՄՈՒԿՇԻՆ ՓԲԸ-ին:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին

Որոշվեց՝

1 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

2 ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին առաջարկել անգործության ժամկետի ավարտից հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում՝ պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Սարգիս Հովհաննիսյան

անդամներ՝

Էդուարդ Ջանջուղազյան

Արթուր Սողոմոնյան

Արեգ Եղիյան

քարտուղար՝

Անի Բազեյան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի
2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 5
արձանագրության

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
պայմանագիր կնքելու որոշման մասին

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1»

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքի Քաղաքային զբոսայգու բարեկարգման, հեծանվուղու և սանհանգույցների կառուցման» աշխատանքների նպատակով կազմակերպված թիվ ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը՝

Գնահատող հանձնաժողովի 2019 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 5 արձանագրային որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները: Համաձայն որի՝

Չափաբաժին 1 Գնման առարկա է հանդիսանում «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքի Քաղաքային զբոսայգու բարեկարգման, հեծանվուղու և սանհանգույցների կառուցման» աշխատանքները:

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր /համապատասխանելու դեպքում նշել «X»/	Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր /չհամապատասխանելու դեպքում նշել «X»/	Անհամապատասխանության համառոտ նկարագրություն
1	Ջերմուկշին ՓԲԸ	X	-	-
2	ՎԱՆԻ ՍՊԸ	X	-	-
3	Հարսնաձոր ՍՊԸ	X	-	-
4	ՄԱՎՇԻՆ ՍՊԸ	X	-	-
5	Մ- Գրուպ Էներգոսերվիս ՍՊԸ	X	-	-

Մասնակցի զբաղեցրած տեղը և անվանումը	Մասնակցի անվանումը	Ընտրված մասնակից /ընտրված մասնակցի համար նշել «X»/	Մասնակցի առաջարկած գինը առանց ԱԱՀ
1	Ջերմուկշին ՓԲԸ	X	179,500,000
2	ՎԱՆԻ ՍՊԸ		193,167,000
3	Հարսնաձոր ՍՊԸ		193,583,000
4	ՄԱՎՇԻՆ ՍՊԸ		198,000,000
5	Մ- Գրուպ Էներգոսերվիս ՍՊԸ		215,920,000

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Ա. Բազեյանին:

Հեռախոս՝ 060-501-560 ներքին 506:

Էլեկտրանային փոստ՝ a.bazeyan@atdf.am

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

ՋԲՄ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով
ընթացակարգի գնահատող
հանձնաժողովի նախագահ՝ Ս. Հովհաննիսյան